



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. մայիսին /վերլուծություն/

2004թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 7668 գործարքներ, որոնց քանակը 2003թ. մայիսի համեմատ աճել է 48.0 %-ով, իսկ 2004թ. ապրիլի համեմատ նվազել՝ 9.6 %-ով:

2004թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3052 օտարման գործարքների 90.8 %-ը կազմել են առուվաճառքները, 8.3%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 42.8%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. մայիսին, 2003թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 28.0%-ով, իսկ 2004թ. ապրիլի համեմատ նվազել է 12.3%-ով: 2004թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի 999 առուվաճառքի գործարքների 68.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2003թ. մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.6%-ով, իսկ 2004թ. ապրիլի համեմատ՝ 16.2 %-ով:

2004թ. մայիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. մայիսին համարժեք է 552.7 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. մայիսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		մայիս 2003թ.	մայիս 2004թ.	ապրիլ 2004թ.
Կենտրոն	250.0-970.0	381.5	450.5	440.2
Արաբկիր	200.0-560.0	270.0	351.7	344.0
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	160.9	217.5	215.2
Նոր-Նորք	115.0-250.0	126.9	183.5	179.4
Ավան	120.0-190.0	126.4	174.6	166.2
Էրեբունի	120.0-300.0	137.5	175.8	173.7
Շենգավիթ	120.0-250.0	135.0	200.6	192.5
Դավթաշեն	130.0-260.0	162.9	220.4	213.2
Աջափնյակ	120.0-250.0	134.3	198.3	189.0
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	135.0	199.2	192.0
Նուբարաշեն	65.0-100.0	57.0	75.8	73.5
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	166.1	222.5	216.3

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. մայիսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.9 %, իսկ տարեկան աճը 34.0%:

2004թ. մայիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 424 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. մայիսի համեմատ աճել է 26.9%-ով, իսկ 2004թ. ապրիլի համեմատ նվազել՝ 19.5%-ով:

2004թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. մայիսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			մայիս 2003թ.	մայիս 2004թ.	ապրիլ 2004թ.
Արագածոտն	<i>Աշտարակ</i>	22.0-95.0	62.2	63.2	63.2
	<i>Ապարան</i>	18.0-40.0	27.1	32.0	30.0
	<i>Թային</i>	18.0-40.0	24.9	30.5	29.3
Արարատ	<i>Արտաշատ</i>	22.0-88.0	54.2	55.8	55.8
	<i>Մասիս</i>	20.0-90.0	54.3	58.9	57.6
	<i>Վեդի</i>	20.0-45.0	31.5	39.8	35.2
	<i>Արարատ</i>	22.0-50.0	31.4	36.6	34.1
Արմավիր	<i>Վաղարշապատ</i>	35.0-102.0	83.8	86.5	86.1
	<i>Արմավիր</i>	21.0-58.0	45.5	50.0	47.9
	<i>Մեծամոր</i>	17.0-50.0	30.5	32.6	31.4
Գեղարքունիք	<i>Սևան</i>	20.0-50.0	30.5	32.9	31.8
	<i>Գավառ</i>	20.0-50.0	30.1	32.8	32.5
	<i>Մարտունի</i>	18.0-38.0	29.3	34.0	30.0
	<i>Վարդենիս</i>	10.0-21.0	17.0	17.3	17.3
	<i>Ճամբարակ</i>	13.0-30.0	15.8	17.9	17.8
Լոռի	<i>Վանաձոր</i>	30.0-90.0	60.6	62.3	62.0
	<i>Ստեփանավան</i>	20.0-48.0	33.0	34.3	33.6
	<i>Սպիտակ</i>	17.0-40.0	23.7	34.0	30.1
	<i>Ալավերդի</i>	15.0-40.0	25.3	25.8	25.8
	<i>Տաշիր</i>	15.0-28.0	19.2	23.0	21.0
Կոտայք	<i>Աբովյան</i>	40.0-110.0	82.3	89.0	85.3
	<i>Նոր Հաճն</i>	35.0-75.0	51.7	58.9	57.2
	<i>Բյուրեղավան</i>	15.0-45.0	35.1	37.5	36.5
	<i>Եղվարդ</i>	28.0-55.0	40.2	44.2	42.9
	<i>Հրազդան</i>	18.0-55.0	30.5	34.5	34.5
	<i>Ծաղկաձոր</i>	22.0-95.0	75.2	75.9	75.9
	<i>Չարենցավան</i>	13.0-55.0	30.8	35.0	34.1
Շիրակ	<i>Գյումրի</i>	30.0-100.0	70.5	72.2	72.2
	<i>Արթիկ</i>	17.0-45.0	25.1	28.5	27.0
	<i>Մարայիկ</i>	15.0-33.0	23.4	26.5	25.1
Սյունիք	<i>Գորիս</i>	21.0-45.0	29.5	34.8	31.0
	<i>Կապան</i>	18.0-52.0	28.9	33.1	31.0
	<i>Միսիան</i>	17.0-37.0	27.4	32.0	31.2
	<i>Մեղրի</i>	18.0-58.0	24.9	25.3	25.3
	<i>Ագարակ</i>	13.0-30.0	20.0	25.2	25.1
	<i>Քաջարան</i>	13.0-30.0	18.3	18.9	18.5
Վայոց Ձոր	<i>Վայք</i>	15.0-48.0	35.2	35.3	35.3
	<i>Եղեգնաձոր</i>	20.0-58.0	46.7	47.0	47.0
	<i>Ջերմուկ</i>	18.0-50.0	40.9	41.1	41.1
Տավուշ	<i>Դիլիջան</i>	15.0-54.0	36	36.3	36.3
	<i>Իջևան</i>	23.0-60.0	40.3	43.5	42.0
	<i>Բերդ</i>	15.0-43.0	29.0	29.3	29.3
	<i>Նոյնմբերյան</i>	15.0-45.0	26.5	27.2	27.2

2004թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի տների բնակարանների միջին գների ամսական աճը կազմել է 2.8%, իսկ տարեկան աճը՝ 8.3% :

2004թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 466 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 88, մյուս մարզերում միասին վերցրած՝ 378: 2004թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն նվազել է 15.9 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 12.9 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 16.6%-ով: 2003թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 29.8 %-ով, ընդ որում Երևանում նվազել է 6.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 42.6%-ով:

2004թ. մայիսին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. մայիսին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		մայիս 2003թ.	մայիս 2004թ.	ապրիլ 2004թ.
Կենտրոն	255.0-990.0	385.0	462.5	454.3
Արաբկիր	205.0-580.0	272.0	354.6	349.7
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	162.0	219.4	216.2
Նորք-Մարաշ	120.0-390.0	290.0	331.9	328.0
Ավան	125.0-200.0	128.0	176.8	167.0
Էրեբունի	130.0-320.0	139.0	177.0	174.7
Շենգավիթ	120.0-260.0	136.0	201.2	193.1
Դավթաշեն	140.0-260.0	164.0	221.6	215.3
Աջափնյակ	125.0-230.0	137.0	199.8	190.5
Մալաթիա-Սեբաստիա	125.0-250.0	136.0	200.7	193.1
Նուբարաշեն	65.0-110.0	58.0	76.2	74.3
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-990.0	182.5	238.3	232.4

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. մայիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.5%, իսկ տարեկան աճը՝ 30.6%:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. մայիսին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			մայիս 2003թ.	մայիս 2004թ.	ապրիլ 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.2	83.4	83.3
	Ապարան	20.0-60.0	38.6	38.9	38.9
	Թալին	20.0-65.0	28.1	30.9	30.1
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.5	62.0	61.9
	Մասիս	50.0-90.0	62.4	63.0	62.8
	Վեդի	25.0-65.0	36.2	40.5	36.3
	Արարատ	20.0-60.0	37.3	37.6	37.6
Արմավիր	Վաղարշապատ	70.0-120.0	88.6	90.2	90.1
	Արմավիր	35.0-90.0	52.0	52.7	52.6
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.3	36.4	36.4
	Գավառ	20.0-60.0	39.8	39.9	39.9
	Մարտունի	20.0-55.0	33.7	35.1	33.9
	Վարդենիս	15.0-45.0	21.1	21.3	21.3
	Ճամբարակ	15.0-40.0	18.6	20.1	20.0
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	67.8	69.7	69.4
	Ստեփանավան	15.0-60.0	33.1	35.1	33.7
	Սյիտակ	20.0-55.0	24.1	34.3	30.5
	Ալավերդի	15.0-50.0	25.7	26.0	26.0
	Տաշիր	15.0-40.0	19.7	23.3	21.1
Կոտայք	Արուսյան	60.0-120.0	91.7	93.0	92.9
	Նոր Հաճն	40.0-80.0	54.0	59.3	55.8
	Բյուրեղավան	25.0-60.0	38.1	38.2	38.2
	Եղվարդ	30.0-60.0	47.0	47.6	47.5
	Հրազդան	25.0-60.0	39.7	40.5	40.4
	Ծաղկաձոր	60.0-100.0	84.8	85.8	85.6
	Չարենցավան	20.0-55.0	33.2	35.8	34.1
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	89.6	91.6	91.3
	Արթիկ	15.0-50.0	28.5	28.7	28.7
	Մարալիկ	15.0-50.0	23.8	26.9	25.2
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.3	35.7	31.7
	Կապան	20.0-60.0	30.8	34.7	31.2
	Սիսիան	20.0-55.0	28.4	32.4	32.1
	Մեղրի	15.0-40.0	28.1	28.2	28.2
	Ագարակ	15.0-40.0	23.8	27.4	27.3
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	36.9	37.0	37.0
	Եղեգնաձոր	25.0-65.0	48.9	49.3	49.3
	Զերմուկ	25.0-65.0	42.9	43.4	43.4
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.1	39.2	39.2
	Իջևան	30.0-65.0	40.9	43.9	42.2
	Բերդ	20.0-55.0	30.7	30.9	30.9
	Նոյեմբերյան	20.0-55.0	30.6	30.8	30.8

2004թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 1.8%, իսկ տարեկան աճը՝ 4.1%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. մայիսին հանրապետությունում օտարվել են 362.20հա /այդ թվում 11.97 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 302.93 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 359.60հա հողերի /այդ թվում 11.97 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 300.77 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 1.25 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 0.81 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 1.35 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ /փոխանակման բոլոր գործարքները իրականացվել են մարզերում և գյուղատնտեսական նշանակության հողեր են/: Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 124.02 հա, որից 108.15 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. մայիսին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չեռական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.0	9	0.77	8	0.84	0	0.0	48	3.40	4	1.39
Արագածոտն	0	0.0	0	0.0	6	0.59	43	18.79	18	1.98	0	0.0
Արարատ	43	85.90	104	11.65	0	0.0	74	22.25	52	4.22	0	0.0
Արմավիր	3	23.70	0	0.0	0	0.0	62	35.34	26	2.19	1	0.002
Գեղարքունիք	0	0.0	0	0.0	1	0.15	8	5.19	5	1.44	2	0.62
Լոռի	0	0.0	0	0.0	0	0.0	9	4.26	4	0.49	0	0.0
Կոտայք	8	19.23	0	0.0	0	0.0	87	28.84	95	8.43	3	1.27
Շիրակ	0	0.0	0	0.0	0	0.0	15	10.34	4	0.28	2	0.04
Սյունիք	0	0.0	0	0.0	0	0.0	3	2.64	3	0.18	0	0.0
Վայոց Ձոր	4	25.06	5	0.60	0	0.0	2	0.25	1	0.10	0	0.0
Տավուշ	0	0.0	1	0.04	0	0.0	15	18.97	1	0.05	0	0.0
Ընդամենը	58	153.89	119	13.06	15	1.58	318	146.87	257	22.76	12	3.32

2004թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հողերի 786 առուվաճառքի գործարքներ, որից 376-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 403-ը՝ բնակավայրերի, 5-ը՝ արդյունաբերական օբյեկտների, և 2-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ:

2004թ. մայիսին հողերի առուվաճառքներից 187-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 10-ը՝ Երևանում /0.97 հա/, իսկ 177-ը՝ մյուս մարզերում /178.44հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 58 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /153.89հա/, 119-ը՝ /13.06 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ /, 8-ը՝ հասարակական կառուցապատման /0.94 հա/ և 2-ը /11.52հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2004թ. մայիսին հանրապետությունում վաճառվել են 5 միավոր արդյունաբերական օբյեկտների հողեր՝ մեկական միավոր Երևանում /5.56 հա/ և Արմավիրի մարզում /0.03հա/, իսկ 3-ը /1.00հա/ Կոտայքի մարզում:

2004թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 376 գործարքներ, այդ թվում աճուրդով 58, դատարանի վճռով 1 գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						25	9.11	840.0	10000.0	2660.0
Ապարան						8	5.35	130.0	1150.0	420.0
Թալին						9	3.91	200.0	1680.0	460.0
Ծաղկահովիտ								170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ	10	3.26	1775.0	18095.0	4490.0	24	7.57	740.0	10000.0	2090.0
Մասիս	13	62.70	260.0	2160.0	590.0	29	8.72	400.0	8500.0	1280.0
Վեդի	20	19.94	205.0	2555.0	1955.0	21	5.96	450.0	7200.0	1285.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						11	4.85	650.0	4650.0	1340.0
Բաղրամյան	3	23.70	20.0	60.0	35.0	12	19.98	130.0	1200.0	500.0
Վաղարշապատ						39	10.51	980.0	14000.0	2230.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	1.20	420.0	1100.0	635.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						2	3.99	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Այվերդի						4	1.76	360.0	5500.0	850.0
Գուգարք						3	0.53	500.0	6000.0	1750.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան								180.0	4000.0	440.0
Տաշիր						2	1.98	100.0	400.0	255.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	0.18	865.0	865.0	865.0	48	11.29	520.0	14000.0	5200.0
Եղվարդ						35	15.05	380.0	10000.0	3420.0
Հրազդան	6	19.05	130.0	1200.0	415.0	4	2.50	250.0	6000.0	820.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						13	8.33	550.0	1200.0	700.0
Ամասիա								80.0	525.0	185.0
Անի						1	1.02	240.0	800.0	280.0
Աշոցք								60.0	210.0	150.0
Արթիկ						1	0.99	140.0	800.0	300.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	450.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի								400.0	4240.0	840.0
Սիսիան						3	2.64	90.0	1500.0	280.0
Վայոց Ձորի մարզ										

Եղեգնաձոր	4	25.06	200.0	395.0	345.0	2	0.25	260.0	4000.0	2100.0
Վայք								120.0	3400.0	900.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	2000.0	620.0
Իջևան						6	10.0	530.0	4000.0	1350.0
Նոյեմբերյան						9	8.97	100.0	8340.0	600.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. մայիսին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 319 առուվաճառքի գործարքներ, որից 110-ը՝ աճուրդային վաճառքներ, 2-ը՝ դատարանի վճռով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 քմ մակերեսի հաշվարկով.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						18	19777.0	250.0	8000.0	2650.0
Ապարան								250.0	1400.0	340.0
Թային								100.0	800.0	130.0
Օաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	93	105485.0	20.0	670.0	430.0	7	7200.0	300.0	6000.0	820.0
Մասիս	11	11000.0	215.0	215.0	215.0	31	21790.0	300.0	20000.0	1050.0
Վեդի						14	13243.0	250.0	2200.0	620.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						5	5650.0	300.0	5000.0	950.0
Բաղրամյան								180.0	600.0	210.0
Վաղարշապատ						21	16225.0	300.0	10000.0	1490.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	12789.0	300.0	2000.0	590.0
Ճամբարակ								100.0	300.0	140.0
Մարտունի								200.0	600.0	250.0
Սևան						2	1600.0	200.0	2000.0	260.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						2	2307.0	150.0	5200.0	740.0
Մպիտակ						2	2600.0	140.0	900.0	180.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						38	32039.0	300.0	10000.0	1800.0
Եղվարդ						46	46695.0	300.0	10000.0	1950.0
Հրազդան						9	4285.0	300.0	8000.0	1460.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						3	2390.0	250.0	3400.0	370.0
Ամասիա								100.0	300.0	135.0

Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ						1	400.0	150.0	900.0	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1360.0	150.0	1200.0	390.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի						1	390.0	150.0	900.0	230.0
Միսիս								150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	6000.0	82.0	275.0	165.0	1	960.0	150.0	2200.0	310.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան	1	400.0	434.0	434.0	434.0	1	500.0	150.0	2200.0	590.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2004թ. մայիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 20 գործարքներ 17.48 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում 1-ը՝ Արագածոտնի /6.08 հա/, 6-ը՝ Արարատի /1.23 հա/, 1-ը՝ Արմավիրի /1.50 հա/, 4-ը՝ Վայոց Ձորի /0.79հա/ և 8-ը Տավուշի /7.88 հա/ մարզերում:

2004թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 719 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.4%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 36.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 9.8%-ով, իսկ 2003թ. մայիսի համեմատ աճել՝ 40.7 %-ով:

2004թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 55 բնակարանների, 15 անհատական բնակելի տների, 191 հասարակական, 15 արտադրական նշանակության օբյեկտների, 438 միավոր հողերի և 5 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2004թ. մայիսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 45 վարձակալության գործարքների քանակները 2004թ. ապրիլի համեմատ նվազել են 6.3 %, իսկ 2003թ. մայիսի համեմատ՝ 46.4 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. մայիսին հանրապետությունում վարձակալվել են 2110.58հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 19.77 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1941.56 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 11.59 հա բնակավայրերի, 16.07 հա արդյունաբերական օբյեկտների, 120.81 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 0.17 հա հատուկ պահպանվող տարածքների և 0.62 հա էներգետիկայի օբյեկտների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ ծավալներ են արձանագրվել Արագածոտնի մարզում՝ 1190.77 հա, որից 1190.08 հա գյուղատնտեսական նշանակության: 2004թ. մայիսին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 856.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. մայիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	5	795.0	34	395.08

Արարատ	0	0.00	21	49.09
Արմավիր	0	0.00	7	54.30
Գեղարքունիք	1	9.00	56	301.64
Լոռի	1	2.00	14	51.16
Կոտայք	1	50.00	17	81.06
Շիրակ	0	0.00	14	63.90
Սյունիք	0	0.00	20	45.61
Վայոց Ձոր	0	0.00	12	28.60
Տավուշ	0	0.00	3	15.12
Ընդամենը	8	856.00	198	1085.56

2004թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 621 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.1%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. մայիսի համեմատ աճել է 55.3%-ով, իսկ 2004թ. ապրիլի համեմատ նվազել՝ 13.4%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 35.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.1%/, հողերի /18.5%/, առանձնատների /16.7%/ և հասարակական նշանակության օբյեկտների /16.3%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 310 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. ապրիլի համեմատ, նվազել է 19.1%-ով, իսկ 2003թ. մայիսի համեմատ աճել՝ 62.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 96.93 հա /այդ թվում 1.03 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 95.07 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ ծավալներ են գրավադրվել Արարատի մարզում՝ /31.02 հա/, որից 30.36 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 24 և 12 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.5%: 2003թ. մայիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 50.0%-ով, իսկ 2004թ. ապրիլի համեմատ նվազել՝ 18.2%-ով: 2004թ. մայիսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 19.4%:

2004թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1074 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. մայիսի համեմատ աճել է 50.2%-ով, իսկ 2004թ. ապրիլի համեմատ նվազել՝ 27.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /42.8%:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն